

25,214

332

9-68

un

ԳՅՈՒՂԱՑՈՒՆ
 ԻՆՁ Ե ԶԱՐԿԱՎՈՐ ԻՄԱՆԱԸ
 ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ
 Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն
 ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Հրատարակություն Անդրկովկ. Գլխ. Պետական
 Սեխաս. Խնայող. Գրամարկի

ԹԻՖԼԻՍ—1927

332

9-68

13240

Խնայողական դրամարկղի ավանդա-
գրքույկ ունեցողի համար անհամե-
մատ հեշտ և հաղթահարել կարիքը:




Խնայողական դրամարկղը
տնտեսելու—խնայողության դպրոց և:



Առանց կոպեկի ուղբին գոյություն
ունենալ չե կարող:



Պետ. խն. դրամարկղի ամեն մի
ավանդատու արդեն մասնակցում և
խորհրդային շինարարության գործում:



== Մ Ի Ա Յ Ն ==

ԱՆՄԻՏ ՄԱՐԴԻԸ

ՓՈՂԸ ՁԵՌՔՈՒՄ ԿՊԱՅԻ:

ԳՅՈՒՂԱՅՈՒ

ԱՄԵՆԱԿԱՎ ԲԱՐԵԿԱՄԸ

≡ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ≡

ԴՐԱՄԱՐԿՂ ՆԵՐՆ Ե Ն:

ՊԵՏ. ԽՆ. ԱՇԽ. ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻՆ ԿԻՑ
ԳՏՆՎԱԾ

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ-ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲՅՈՒՐՈՆ

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԱՎԱՆԴԱ-
ՏՈՒՆԵՐԻՆ

== ՏԱԼԻՍ Ե ՉՐԻԱԲԱՐ ==

Իրավաբանական տեղեկություններ, բացատրու-
թյուններ, յեզրակացություններ և խորհուրդներ
բոլոր հարցերի նկատմամբ՝ հարկային, հողային,
բնակարանային, ամուսնական, աշխատանքին վե-
րաբերյալ և քրեական ու քաղաքացիական որեւիճ-
անքին վերաբերյալ այլ խնդիրների նկատմամբ:

ՊԵՏ. ԽՆ. ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ

ԲՈԼՈՐ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԸ

ԿԱՐՈՂ ԵՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ անմիջապես (բերա-
նացի կամ դրավոր) և կամ իրենց խն. դրա-
մարկղի միջոցով հետևյալ հասցեով

Москва 6, Настасьинский пер., 3.

Справочно-Консультационное Бюро Главного
Управления Гострудсберкассами.

ԻՆՉՊԵՍ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱ-
ԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐ:

1922 թվի դեկտեմբերի 26-ին ժողովրդական
կոմիսարների Խորհուրդը հայտարարեց Խնայողական
դրամարկղներ կազմակերպելուն վերաբերյալ որենքը:
Հետևյալ պատճառներն էին, որ հարկադրեցին կառա-
վարությանը հիմնել Խնայողական դրամարկղներ. ա-
ռաջին, հարկավոր եր ազգաբնակչության աշխատավո-
րական մասսաներին հնարավորություն տալ՝ դրա-
մական խնայողությունները և ազատ միջոցները ա-
պահով և ձեռնառու ձևով պահելու, և երկրորդ, հարկա-
վոր եր միջոցներ ձեռք առնել՝ ամրապնդելու պետա-
կան ֆինանսական միջոցները և վարկը (կրեդիտ),
որոնք սկզբնական շրջանի քայքայումից հետո ամուր
հիմքերի վրա ելին կանգնել:

Ինչու կառավարությունը միայն 1922 թվի վեր-
ջին որոշեց կազմակերպել խնայողական դրամարկղ-
ներ, և ոչ ավելի շուտ:

Հարկավոր է հիշել, վոր Խորհրդային Իշխանու-
թյունը միայն 1921 թվին որոշեց կյանքի մեջ դոր-
ծադրել, այսպես կոչված, նոր տնտեսական քաղաքա-
կանությունը և միայն այդ ժամանակից իվեր աշ-
խատավորական մասսաների մեջ սկսեցին յերևան գալ
ազատ դրամական միջոցներ. Ինչպես հայտնի է, մին-

չև այդ ժամանակը գյուղացիական տնտեսութիւնը կրում էր, այսպէս կոչված, նատուրալ՝ բնույթ: Գյուղացիութիւնը արտադրում էր գլխավորապէս միայն այն, ինչ որ պահանջվում էր նրա սեփական տնտեսութեան համար: Տնտեսութեան մեջ գոյութիւն ունեցող ավելցուկները պետութիւնը զորքի և բանվորներին պետքերի համար հավաքում էր տուրքաբաժանքի միջոցով (разверстка) և դրա պատճառը այն էր, վոր պետական յեկամուտներ համարյա չէին ստացվում, իսկ մինչդեռ քաղաքացիական պատերազմը մղւելու, ինչպէս նաև պետական ապարատի պահպանութեան պետքերի համար անհրաժեշտ էր ունենալ միջոցներ և ամենից առաջ կենսամթերքներ: Պարզ է, վոր կառավարութեան համար ուրիշ յելք չէր մնում, քան՝ ոգտվել նրանով, ինչ տալիս էր գյուղական տրնտեսութիւնը: Յեթե նույնիսկ գյուղացուն հաջողվում էր իրեն մոտ թողնել որևէ ավելցուկ, ապա նա այդ ավելցուկը աշխատում էր ոչ թե ծախել փողով, այլ փոխանակել որևէ ալրանքի հետ: Շրջանառութեան մեջ նետվող թղթադրամների քանակութիւնը ավելի ու ավելի մեծանում էր և այդ դրամների գինը հետզհետեւ ընկնում ու նրանց գնողական ուժը ավելի ու ավելի փոքրանում:

Պարզ է, վոր նման պայմաններում խնայողական դրամարկղները անգործութեան մատնված կլինեին:

Բայց յերբ կառավրութիւնը վորոշեց դրամը կայուն դարձնելու համար վորոշ քայլեր անել, ուրիշ խոսքով՝ ձեռք զարկեց կայուն դրամ բաց թողնելու գործին և այդ նպատակով շրջանառութեան մեջ

մտցրեց բանկային տոմսերը, այսինքն չերվոնեցները, վորոնք գնահատվում էին վոսկի տասանոցին հավասար կերպով, յերբոր վերջացավ պատերազմը և արդեն կարելի էր հրաժարվել տուրքաբաժանքից (разверстка) ու կառավարութիւնը վորոշեց նատուրալ տնտեսութիւնից անցնել դրամական տնտեսութեան և թույլ տվեց ազգաբնակչութեան՝ իր տնտեսութեան արտադրութեան ավելցուկները ազատ վաճառել, — ահա հենց այդ ժամանակ պետք զգացվեց՝ հնարավորութիւն ստեղծել ապահով և ձեռնտու ձևով պահելու այն, թեկուզ և փոքրիկ, դրամական միջոցները, վորոնք կարող էին ազգաբնակչութեան ձեռքում ժամանակավորապէս ազատ, առանց գործադրութեան մնալ:

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԽՆ. ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԸ
ՍԿՉԻՆԵՐՈՒՄ:

Սկզբնական շրջանում խնայողական դրամարկղները աշխատում էին շատ ծանր պայմանների մեջ, մի շրջան, յերբ սովետական դրամանիշների գինը արագութեամբ ընկնում էր:

Բանվորա-գյուղացիական կառավարութեան համար շատ զգվար էր, մի շարք տարիների պատերազմից ու քայքայումից հետո, միանգամից մտցնել ամուր, կայուն դրամ-վալյուտա, ուստի և նոր տնտեսական քաղաքականութեան, կամ, ինչպէս ընդունված է կրճատ ասել՝ Նեպի սկզբնական շրջանում սովետական դրամանիշների գինը, բացի չերվոնեցից, շարունակաբար ընկնում էր և այդ հանգամանքը քանի գնում, ավելի ու ավելի ուժեղանում էր:

Մենք բոլորս հիշում ենք սովետական հուշակա-
վոր ուղբին, վորի գինը որ-ավուր ընկնում էր, վորը
յուրաքանչյուր որ ավելի ու ավելի մեծ քանակու-
թյամբ վողողում էր յերկիրը և վորի հաշիվը պահելու
համար հարկավոր էր խոսել վոչ թե միլիոններով այլ
միլիարդներով, իսկ մեր Հանրապետության ամեն մի
քաղաքացի դարձել էր միլիարդատեր: Իսկ վոր գլխա-
վորն է, այդ միլիարդներով համարյա վոչինչ էլ առ-
նել չէր կարելի:

Դրամների այդպես անարժեք դառնալուց առան-
ձնապես փնտրվում էյին ինչպես քաղաքի, այնպես և
գյուղի աշխատավորները: Սովետական ուղբու անկու-
մը առանձնապես զգալի էր քաղաքում: Ամուր վորո-
շած գներով մթերքափայտերի (паяк) բաշխումը ընդհա-
տեցին: Բանվորներն ու ծառայողները սկսեցին ամեն
բան դրամով ձեռք բերել: Յեվ ահա, այսօր ա-
ռաջուց ստանալով մի ամսվա կամ 2 շաբաթվա վար-
ձը, բերում էյիր տուն և դու հաջորդ առավոտյան
տեսնում էյիր, վոր այդ փողերը ավելի են արժանա-
ցել, կորցրել են իրենց յերեկվան գինը և վոր այսօր
նրանցով չե կարելի առնել այն, ինչ հնարավոր էր
առնել յերեկ:

Իսկ յերբ դրամները համեմատաբար ավելի եր-
կար ժամանակ էյին մնում անշարժ, ապա նրանք դառ-
նում են համարյա անարժեք, անվոչինչ:

Դրամների գինը ընկնելուց փնտաներ էր կրում և
գյուղը: Յենթադրենք, գյուղացին, այսօր ծախում էր
փողով իր հացը, ըստ երևույթին, ձեռնառու պայման-
ներով: Փողը տանում էր տուն և մինչև հաջողացնում
էր մի քանի որից հետո գնալ քաղաք վորևէ բան

առնելու, պարզվում էր, վոր արդեն այդ փողերը բա-
վական չեն դնելու համար այն, ինչ առաջուց մտադիր
էր գյուղացին:

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԸ ՈԳՆԵՅԻՆ ԱՇԽԱՏԱ-
ՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԻՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ
ԱՐԺԵՔԸ:

Դրությունը շատ ծանր էր: Հարկավոր էր վորոշ
միջոցով ոգնության գալ աշխատավորությանը: Ահա
այդ ժամանակ հիմնվեցին խն. դրամարկղները, վորոնց
վրա սովետական իշխանությունը պարտականություն
դրեց՝ ապահովագրելու այնտեղ մտցրած դրամական
միջոցները:

Յերբ դրամարկղը ավանդատուից փող էր ընդու-
նում սովետական դրամանիշներով, ապա նա իսկույն-
ևեստ ավանդագրքույկի մեջ (сберкнижка) նշանակում
էր, թե ինչ կարժենային այդ դրամները, յեթե նրանց
վերածեյինք վոսկու հաշվի: Յերբ ավանդատուն գալիս
էր հաջորդ որը կամ մի քանի որից հետո և հայտնում
էր, վոր իրեն այսքան փող է հարկավոր, ապա դրա-
մարկղը տալիս էր նրան սովետական դրամանիշներով,
այդ գումարը վոսկու հաշվով—հենց այդ որվա կուր-
սով: Յեթե ավանդատուի փող մտցնելու որը վոսկու
ուղբին սովետական դրամներով արժեք, յենթադրենք,
300.000.000 ուղբի, իսկ ստանալու որը նույն ուղբ-
լին արժենար 700.000.000, ապա դրամարկղը ուղբին
վերադարձնում էր այդ վերջին գնահատությամբ: Այս-
պիսով, խնայողական դրամարկղը գումար մտցնողը
կարող էր հանդիստ լինել և չմտածել այն մասին, վոր

իրա դրամի զինը վաղը կարող ե ընկնել և վոր ինքը կարող ե դրանից փլասովել:

Քաղաքի ազգաբնակիչները շուտով սովորեց խնայող. դրամարկղներին, թեև վոչ բոլորը միանգամից ըմբռնեցին այն ահագին ոգուտն ու շահը, վորոնք ներկայացնում էին խն. դրամարկղները աշխատավորներին համար, վոչ ամենքը հասկացան միանգամից այն հոգսը, վորը ցույց եր տալիս Բանվորա-Գյուղացիական Կառավարութունը աշխատավորի աշխատավարձը պահպանելու նկատմամբ: Բայց և այնպես, 1924 թ. մարտին, այն ժամանակ, յերբ կառավարութունը մտցրեց շրջանառության մեջ ամուր, արժեքավոր դրամներ, 700 հազարից ավելի քաղաքացիներ ոգտվում էին այն արտոնություններից, վորոնք ներկայացնում էին խն. դրամարկղները: Յեկ զուր չե, վոր այդ դրամարկղները «աշխատավորական» անունը ստացան. նրանք ամենածանր դրության ժամանակ, վորի մեջ գտնվում եր մեր դրամական տնտեսութունը, իրապես ոգնության հասան աշխատավորական մասսաներին:

ԻՆՉՈՒ՞ ՊԱՀՊԱՆՎԵՑԻՆ ԽՆ. ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԸ ԿԱՅՈՒՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ ՆՍՏԱՍՏՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ:

Յերբ շրջանառության մեջ մտցրվեցին կայուն դրամները, լայն գործածություն ստացան չերվոնեցները, պետ. գանձարկղի տոմսերը (казначейские билеты), իսկ հետո արծաթե և պղնձի դրամները, արդեն հնարավոր դարձավ դրանցով գնել այն ժամանակ, յերբ ուզում ես, ու այն բանը, ինչ ցանկանում ես և այդ դրամները արդեն իրենց զինը չեյին կորցնում:

Հարց ե առաջ գալիս,—եկ ինչ կարիք կա հիմա պահպանելու այդ խն. դրամարկղները, յերբ ամեն աշխատավոր կարող ե հանգիստ մնալ իր դրամի արժեքի նկատմամբ և պահել այն իրեն տանը ու պահել այնպես, ինչպես հնումն էյին անում՝ թագցնել վորեև տեղ, ինչքան կարելի ե հեռու մարդկանց աչքերից, գետնի տակ ըզուղում կամ պուլիկում:

Վոր ամեն մի տնտեսության մեջ դրամներ կան, —յերբեմն շատ, յերբեմն քիչ,—դա հայտնի ե: Ճիշտ ե, այդ մասին չեն սիրում հայտնել հարեանին, լուռ են, և գուցե լավ ել են անում, վոր չեն հայտնում. այդպես մարդ ավելի հանգիստ ե զգում իրան:

Իսկ ազգաբնակիչյան մոտ վերտեղից են յերեվան գալիս դրամական—թեկուզ և ժամանակավոր—ավելցուկներ: Գյուղացիները, ինչպես հայտնի ե, ավելի տնտես և հաշվով մարդիկ են. նրանք գեռ շատ առաջ ամեն ինչ հաշվի են առնում, ինչ ե իրենց հարկավոր, ինչի համար և ինչքան ե հարկավոր: Գյուղացին հաշվի ե առնում, վոր նրան հարկավոր ե ձի գնել, արորը գութանի փոխել, իր խրճիթը ե բալի մյուս ծածկերը վերաշինել, կամ նոր խրճիթ շինել, հարկերը, տուրքերը վճարել,—և վերջապես քիչ ծախսեր ու կարիքներ ունի տնտեսությունը: Միանգամից այնպիսի գումարի դրամներ, վորոնք անհրաժեշտ են խոշոր բացերը և կարիքները լրացնելու համար, գյուղացին երբեք չե ունենում. հարկավոր գումարները կարելի ե միայն հավաքել քիչ-քիչ, աննկատելի կերպով:

Հատիկն ե ծախում, կենդանիներից ե ծախում, և այդպիսով հավաքվում ե մի զգալի գումար, վորը, ասենք, կրավի և՛ ձի առնելու համար: Նման միջոցները

կուտակվում են վոչ մի որում և վոչ ել շաբաթների ընթացքում, այլ մի շաբաթ ամիսների ընթացքում:

Հարց ե առաջ գալիս. վերտեղ պահել այդ ձևով կուտակվող աշխատավորական դրամները: Յեւ անա գյուղացին յաճախ հիշում ե «պապի բղուղը», վորը կարելի ե վորևե գողտուկ տեղ դնել, միանգամայն հեռու մարդկային աչքերից:

Լավ ե, վոր այդպես են անում և իհնչ ոգուտ դրանից:

Յեթե հաշվելու լինենք, թե նման ձևով պահելու հետևանքով, վորքան աշխատավորական դրամներ են կորել, դրամներ, վերոնց աշխատելու համար այնքան արյուն ու քրտինք ե յեղել թափված, ապա մեծ գումար կստանանք—միլլիոնների կհասնի: Եվ դա հասկանալի ե. ամեն մեկը գիտի, թե գյուղում ինչ պայմաններ են տիրում: Իհնչքան ել վոր քեզ թվա, թե փողերդ շատ լավ ես պահել, միլենույն ե, գողը քո գաղտնիքը կիմանա: Գյուղում կողպեքները, փականքները յուսալի չեն, պահապաններ չկան: Առանձնապես աշխատանքի եռ ու զեռի ժամանակ, դաշտային աշխատանքների ժամանակ,—հասակավորները գնում են դաշտ, տանը մնում են մանր երեխաները, և հա փորձանքը պատրաստ ե. գողը առանց դժվարության կգտնի այդ բոլորը, իսկ հետոյ գնա ու մտաբերի, թե վորտեղ եյին պահված քո խնայողությունները:

Իսկ «կարմիր աքաղաղը» (հրդեհ), վորից այնքան քնաններ են կրում մեր գյուղերը հենց հնուց: Ամառը վրա ե հասնում և մեկ ել տեսնում ես թե ինչպես այրվում են գյուղերը իրենց ծղնտե կտուրներով և կրակը լափում ե ամեն ինչ, առանց խնայելու և քո «բղուղը» կամ «պուլիկը»:

ԴՐԱՄԸ ՏԱՆԸ ՊԱՀԵԼԸ ՄԻՏԳ ԶՈՒՆԻ:

Գյուղացին չ'պետքե մոռանա, վոր փողը տանը պահելը վոչ միայն վտանգավոր ե, այլև դրանից վոչ մի ոգուտ չկա վոչ իրեն և վոչ ել պիտության համար, բացի քնասից:

Փողը չպետքե անշարժ թողնել, չպետքե մեռած գանձ դարձնել: Նրան չպետքե հանել շրջանառությունից, զրկել շարժումից: Այդպես ե պահանջում պետական տնտեսությունը, այդպես ե պահանջում պետության հոգսը այն մասին, վորպեսզի ազատ դրամական միջոցների պակասությունն չ'զգացվի, և վորպեսզի, մյուս կողմից, պետք չ'լինի նոր դրամներ բաց թողնել և այդպիսով իջեցնել արդեն բաց թողած դրամների գինը:

Իսկ Բանվորա-Գյուղացիական պետությանը շրջանառության համար շարունակաբար դրամական միջոցներ են հարկավոր և այն ել վոչ փոքր քանակությամբ: Ինչպես գյուղական, այնպես և քաղաքի տնտեսությունը իմպերիալիստական պատերազմի ընթացքում քայքայվեց և անկումի հասավ: Համաշխարհային կողոպտիչ պատերազմը, իսկ նրանից հետո ել քաղաքացիական պատերազմը կործանաբար ազդեցություն ունեցան ժողովրդական տնտեսության վրա: Բոլորը հիշում են, թե ինչ սարսափելի քայքայումի մեջ եր գտնվում մեր յերկիրը, մինչև, վերջապես, հաջողվեց կարվածատերերի և ֆաբրիկանատերերի վերջին վարձկանին—բարոն Վրանգելին դուրս վունդել յերկրից: Չ'իշտ ե, վերջին տարիներում շատ բան հաջողվեց շիտկել, կարգի բերել: Խորհրդային Միության

յուրաքանչյուր քաղաքացի զգում և տեսնում է թե ինչպես իր աչքի առաջին աստիճանաբար, մեծ դժվարութեամբ, բուժվում են ժողովրդական տնտեսութեան վերքերը: Ներկայումս մեր տնտեսութեան համարյա բոլոր ասպարեզներում մենք հասել ենք այն վիճակին, վորի մեջ գտնվում էր տնտեսութեանը նախ քան պատերազմը: Բայց յեթե մենք նույնիսկ լիովին հասնենք նախապատերազմյան մակարդակին, չենք կարող դա բավարար համարել. աշխատավոր մասսաները նրա համար չեյին այնքան յերկար ու համառ կռիվ մղում, վոր միայն կարողանան ապրել այնպես, և վոչ թե ավելի լավ, ինչպես ապրում էյին նախապատերազմյան շրջանում:

1917 թվի հսկանմբերին բանվորներն ու գյուղացիները իշխանութեանը իրենց ձեռքն առան, վորպեսզի իրենց համար ավելի լավ կյանք ստեղծեն:

Վերցնենք գյուղացու կյանքը. չե՞ վոր նույնիսկ մինչև պատերազմն էլ գյուղացիութեանը շատ ու շատ վատ էր ապրում: Գյուղացիութեան հսկա մեծամասնութեանը իր տնտեսութեանը ճիշտ այնպես էր վարում, ինչպես ամենահին ժամանակները: Անասունները անպետք էյին, գործիքներն անպետք, հողը վատ էր պարարտացվում, արորը դութանի տեղ էր բանում,—և այդ բոլորի հետևանքով բերքը վատ ու սոթն անպակաս էր լինում:

Գյուղատնտեսութեանը մենք չենք կարող այդ վիճակի մեջ թողնել: Մենք պետք է նրան բարձրացնենք, ուժեղացնենք հողի արդյունաբերութեանը, մեծացնենք գյուղատնտեսական մթերքների քանակութեանը:

Մեզ մոտ հիմա շատ է խոսվում այն մասին, վոր գյուղացիներից շատ-շատերը ձի չունեն, յեզ չունեն: Բոլորի համար էլ պարզ է, վոր դա շատ վատ է: Յեզ իսկապես ինչ տնտեսութեան կարող է լինել այնտեղ, վորտեղ վոչ մի ձի, վոչ մի յեզ չկա: Իսկ մեր Միութեան մեջ յուրաքանչյուր 100 տնտեսութեանից քառասունը նույն վիճակի մեջ է գտնվում: Այդ դրութեանը պետք է վերջ տալ: Մեր հիմիկվան գյուղատնտեսական գործիքները,—եղ չենք խոսում արորի, ու նույնիսկ գութանի մասին,—հարկավոր է փոխարինել ուրիշ, ավելի կատարելագործված գործիքներով. տրակտորներ են հարկավոր, հարկավոր է, վոր գյուղում նավթի ճրագների տեղ ելեքտրականութեանը լուսավորե: Մի խոսքով, հարկավոր է այնպես անել, վոր գյուղացու աշխատանքը կարելի լինի թեթևացնել և նրան կուլտուրական կյանքի հարմարութեաններ ներկայացնել:

Այս բոլորը պարզ ու հասկանալի է. բայց այդ բոլորի համար դրամ է հարկավոր ու դրամ: Չե կարելի ասել, վոր մեզ մոտ արդյունաբերական ապրանքների, քաղաքի ապրանքների խնդիրը լավ վիճակի մեջ է գտնվում: Այդ ապրանքներից դեռ բավարար քանակութեամբ չկան, վորի պատճառով էլ նրանք թանգ են գնահատվում և շատ գյուղացիների համար էլ նրանք անմատչելի յեն: Այդ ապրանքների քանակութեանը շատացնելու համար հարկավոր է բարձրացնել մեր գործարանների արտադրողական ուժը: Այդ մենք կարող ենք գլուխ բերել այն դեպքերում, յերբ կնորոգենք մեր գործարանների մեքենաները, կարող կլինենք ինքներս շինել այդ մեքենաները, արտա-

դրել այնպիսի ապրանքներ, վորոնք հիմա արտասահմանից ենք բերում և վորոնք, բայց և այնպես, մենք կարող ենք ինքներս արտադրել և զուր պարտքի տակ չընկնել մեր հարևանների նկատմամբ, մանավանդ վոր նրանք իրենց ապրանքը մեզ շատ թանկ են նստացնում:

Այդ բոլորի համար մեծ գումարներ են հարկավոր:

ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ (ԿՐԵԴԻՏԻ) ՄԱՍԻՆ:

Մեզ մեծ քանակությամբ դրամներ են հարկավոր, բայց մենք առայժմ շատ քիչ ունենք այն: Չե՞ վոր Բանվորա-Պյուղացիական կառավարությունը ցարական ժամանակավոր կառավարություններից շատ քիչ բան է ստացել. համարյա միայն պարտքեր, իսկ բուրժուազիան էլ մյուս կողմից հարկադրեց մեզ պատերազմել և քայքայված վիճակի մեջ ընկնել:

Ի՞նչ պետք է անել:

Չե՞ վոր անփող վոչինչ անել չես կարող. իսկ փողը վերտեղից ձարել:

Առաջ ցարական կառավարությունը, յերբ նրան դրամ եր պետք լինում, դիմում եր ավելի հարուստ կապիտալիստական պետություններին, պարտք եր խնդրում ու ստանում եր նրանից: Յեվ դա հասկանալի է. արևմտյան բուրժուազիան ոժանդակում եր ցարական կառավարությանը, վորովհետև վերջինս այնպիսի թշնամի եր հանդիսանում բանվոր դասակարգի համար, ինչպիսին և արևմտյան բուրժուազիան:

Մեզ դեռևս արասահմանը փող չէ տալիս ամենից առաջ նրա համար, վոր մեզ մոտ իշխանությունը

աշխատավորության ձեռքին է, իսկ ամբողջ աշխարհի կապիտալիստները մեր թշնամիներն են: Նրանք մեզ ցանկացած բողբոջին բավականությամբ կ'վոչնչացնեյին, բայց բարեբաղդաբար, ի մեծ ցավ իրենց, նրանք այդ անել չեն կարող. ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները հրաշալի կերպով հասկանում են, վոր մեր իշխանությունը աշխատավորների իշխանությունն է և թույլ չեն տալիս իրենց տերերին հարձակվել մեզ վրա:

Բացի դրանից, ամբողջ աշխարհի կապիտալիստներին շատ լավ հայանի է, վոր մենք ունենք հուսալի պաշտպան—մեր Կարմիր Բանակը, վորի շնորհիվ մեզ վոչ միայն դատարկ ձեռքերով չեն հաղթիլ, այլև զինավորված դեռ պետք կ'լինի յերկար մտածել, թե վոնց զլնւի դուրս հանել Կարմիր Բանակի հետ: Այդ մեկ:

Բայց կա և այլ հանգամանք, վորի պատճառով արտասահմանում մեզ փող չեն տալիս: Նրանք ասում են. վճարեցե՞ք, կամ համենայն դեպս, ճանաչեցե՞ք այն հին պարտքերը, վորոնք արել եր ցարական կառավարությունը արտասահմանում: Իսկ դա այնպիսի պայման է, վորը մենք մասամբ իրագործել կարող կ'լինենք միայն այն ժամանակ, յերբ կապիտալիստական պետությունները մեզ կտան զգալի փոխառություն՝ մեր տնտեսությունը վերականգնելու համար:

Այսպիսով, դուրս է գալիս, վոր հույս չկա արտասահմանից մոտ ապագայում փոխառություն ստանալու, քանի վոր առայժմ մեզ պարտք տալու վոչ մի տրամադրություն չունեն մեզ համար ձեռնտու պայմաններով:

1003
13240



Իսկ յեթե մի քիչ հեռուն մտածենք, կտեսնենք այդ զբուծթյունից յեւք կա դուրս գալու և վոր մեզ հարկավոր դրամական գումարները կարող ենք հենց մեզ մոտ ճարել, առանց հեռու գնալու:

Վերցնենք հենց այն խնայողությունները, վորոնց մասին մենք վերը հիշեցինք. յեթե դրանք այս կամ այն կերպով ընկնեն պետական դանձարանը, կամ թեկուզ անցնեն կոոպերացիային, կարող կլինեն մեծ ոգուտ բերել, իսկ մինչդեռ այդ դրամները անոգուտ կերպով ընկած են քունջ ու պուճախներում:

Յեթե պետությունը ստանար, իհարկե, ժամանակավորապես, այդ դրամները, նրանք մեծ ոգուտ կարող եյին բերել ամբողջ ժողովրդական տնտեսութեանը: Այդ դրամները մի մասը կարելի կլիներ գործածել՝ տրակտոր ու այլ գյուղատնտեսական գործիքներ պատրաստող գործարաններ շինելու համար, մի մասը՝ գյուղատնտեսութեանը վարկ բաց թողնելու համար, մի մասը՝ ելեքտրոֆիկացիայի համար և այլն, և այլն:

Պետությունը ինչ ձևով կարող է հավաքել այդ առանձին-առանձին տնտեսությունների մեջ ցաք ու ցրելի եղած ժամանակավորապես—ազատ դրամական միջոցները:

Այդ կատարվում է փոխառություններ (займы) բաց թողնելու և ազգաբնակչության մեջ տարածելու միջոցով, կոոպերացիայի միջոցով և, վերջապես, խնայողական դրամարկղների միջոցով:

Փոխառությունների մասին, վորոնք բաց է թողնում Սովետական կառավարությունը վորոշ ժամանակով և ազգաբնակչությանից այդ ձևով պարտք (կրեդիտ) է ստանում, — շատ շատերը գիտեն: Փոխառու-

թյունների պարտատոմսերից (облигации займов), մանավանդ գյուղացիական փոխառութեան պարտատոմսերից շատ գյուղացիներ են ձեռք բերել, և պետք է, վոր ամեն մեկը ունենա նրանցից:

Կոոպերացիան նույնպես ընդունում է ավանդներ (вклады) և այդ ձևով ժողովրդի ձեռքում դանդաղ դրամական ավելցուկները ի մի է հավաքում:

Վերջապես նույն գործը կատարում են խնայողական դրամարկղները:

Իսկապես ասած, ժողովուրդը խնայողական դրամարկղներին ծանոթ էր դեռ նախապատերազմյան շրջանում: Իսկ թե ինչ հսկայական գումարներ եյին կուտակվում խնայողական դրամարկղների միջոցով, ցույց են տալիս հետևյալ թվերը. 1915 թվին խնայողական դրամարկղներում կար 3.000.000.000 (երեք միլիարդ) ուրբի դրամ, իսկ ավանդատուների (вкладчик) թիվը 8 միլիոնից ավել էր: Ահա թե ինչ հսկայական գումարներ եյին գտնվում ցարական կառավարութեան տրամադրութեան տակ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ՄԵՐ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱ-
ՄԱՐԿՂՆԵՐԸ:

Մեր դրամարկղների մեջ եղած գումարները համեմատաբար դեռ շատ չեն: Բայց չէ՞ վոր նրանց գործունեյությունը ընդամենը 4 տարուց մի քիչ ավելի է:

Մեր առաջին դրամարկղները կենտրոնում սկսվեցին բացվել 1923 թ. փետրվարին: Նույն հաշվետվական տարվա վերջում, այն է 1923 թվի հոկտեմբերի 1-ին ընդամենը 357 դրամարկղ կար: Ավանդատուներ

րի թիվը 59,703 եր, իսկ ավանդների մնացորդը հավասար էր 1.711.590 ուրլու:

Իսկ վերջին ժամանակները մեր դործը առաջ է գնում և բավականին աջող կերպով. սույն 1927 թվի մարտի 1-ին դրամարկդների թիվը արդեն 14.819-ի եր հասել, այսինքն մոտ 6000 դրամարկդով ավելի է, քան կար նախապատերազմյան շրջանում. ավանդատուների թիվը հավասար է 1.663.311-ի, իսկ մնացած ավանդների գումարը մոտ 134,5 մլր. ուրբ.:

**ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄ ՊԱՀԵԼԸ
ՎՈՉ ՄԻՍՅՆ ՈԳՏԱՎԵՏ Ե, ԱՅԼԵՎ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ
ՀՈՒՍԱԼԻ Ե:**

Դրամը վոչ թե տանը այլ խնայողական դրամարկդում պահելը ինչո՞ւ են ձեռնտու համարում թե բանվորի և թե գյուղացու համար: Ամենից առաջ հենց նրա համար, վոր, ինչպես մենք առաջուց ասացինք, դրամը տանը պահելը այնքան էլ ապահով չպետք է համարել: Դրամարկդում յերբեք փողդ չի կորչի, վորովհետև նրանց համար կառավարութունն է պատասխանատու: Պետութունը ավանդների ապահովության պատասխանատվությունը վոչ միայն լիովին իր վրա է վերցնում, այլև խնայողական դրամարկդներին մի խոշոր գումարի պահեստի կապիտալ (запасной капитал) է բաց թողել՝ տասը միլլիոն ուրլի, որպեսզի ավանդատուները միանգամայն հանգիստ լինեն:

Ավանդատուի համար կարող է հարց ծագել, ի՞նչ կարող է պատահել նրա փողերին, եթե դրամարկդում վատնումն կամ գողութուն տեղի ունենա: Ամեն մեկը պետք է իմանա՝ ինչ էլ վոր չպատահի, ավանդատուն

վոչ մի ֆրաս չի կրել: Վոմանք երկյուղ են կրում, մտածելով թե, արդյոք, չի՞ կորչիլ ավանդը, յերբ, ասենք, կորչի կամ գողացվի ավանդագրքույկը, վորը դրամարկդի կողմից տրվում է յուրաքանչյուր ավանդատուի և վորի մեջ ամեն անգամ նշանակվում է թե՛ յերբ և ինչքան է փող մտցրված, յերբ և ինչքան է վերցրված և, վերջապես, ինչքան է մնացած: Յե՛վ նման դեպքերում ավանդատուն վախենալու վոչինչ չունի. դրամարկդում հատուկ հաշվեգիրք է պահվում, վորի մեջ ամեն մի ավանդատուի համար առանձին յերեսներ են հատկացվում սույն համարի տակ, ինչ համար վոր կրում է խնայողական ավանդագրքույկը (сберегательная книжка): Յեթե գրքույկը կորել է, հայանիր անմիջապես դրամարկդին և ամեն ինչ կարգի կբերվի. ավանդատուին կտան նոր գրքույկի, իսկ կորած կամ գողացված գրքույկով վոչ վոք փող ստանալ, չե կարող: Յեթե այդ գրքույկը գտնողը կամ գողացողը գնա դրամարկդ և փորձե նրանով դրամ ստանալ՝ միենույն է, նրա փորձը գլուխ չի գալ, վորովհետև դրամարկդի ծառայողը իսկույն կստուգի ավանդագրքույկի և իրեն մոտ եղած փաստաթղթերի վրա եղած ստորագրությունները, իսկ անգրագետ ավանդատուին այնպիսի հարցեր կտա, վորին կողմնակի մարդը պատասխանել չե կարող: Այսպիսով, վոչ վոք, վոչ մի ժամանակ չե կարող դրամարկդից ուրիշ գրքույկով փող ստանալ, յեթե ինքը ավանդատուն իր համաձայնությունը չտա դրամարկդին այն մասին, վոր նրա գրքույկով ուրիշ մարդ էլ կարող է փող ստանալ այնտեղից:

Խնայողական դրամարկղների ավանդները չեն կարող արգելանքի ու բռնադրավման յենթարկվել այլ կերպ, քան դատարանական քննչական հիմնարկների վորոշմամբ և այլն ել միայն քրեական դործերի առթիվ և, ուրեմն, վարչական ու քաղաքացիական իշխանությունները ինքնին չեն կարող արգելանք դնել խն. դրամարկղների ավանդների վրա:

**ՓՈՂԸ ՁԵՌՆՏՈՒ Ե ՊԱՀԵԼ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱ-
ՄԱՐԿՂՆԵՐՈՒՄ:**

Փողը դրամարկղում պահելը ձեռնտու է նրանով, վոր նա վորոշ շահ է տալիս մտցրած ավանդների համար: Ավանդները լինում են ժամանակավոր և առանց վորոշ ժամանակի: Ժամանակավոր ավանդները նրանք են, վորոնք մտցրվում են սկզբից վորոշած ժամանակով, որինսակ 3—6 ամսով և այլն: Դրամարկղը նման ավանդների ամեն մի 100 ուրբուռ համար աարեկան վճարում է 9 ուրբլի, կամ ինչպես ասում են 9 տոկոս: Բայց հարկավոր է այդ փողերը թողնել դրամարկղում և հետ չպահանջել այնքան ժամանակ, վորքան վոր սկզբից վորոշված է եղել:

Առանց վորոշ ժամանակի տրված ավանդները կարելի է վերցնել վաղը, մի շաբթից, մի տարուց հետոյ և այլն, յերբ վոր ուղես, մասամաս կամ միանգամից: Նման ավանդների համար դրամարկղը վճարում է ամեն մի 100 ուրբուռ համար 8 ուրբլի կամ 8 տոկոս տարեկան:

Յուրաքանչյուր դրամարկղում, ինչպես վերը հիշված է, ամեն մի ավանդատուի համար առանձին հաշիվ է բացվում և ավանդատուն ամեն մի բուպե կարող

է իմանալ, թե ինչքան փող ունի, կամ ինչքան նրան տոկոս է հասնում դրամարկղից:

Յուրաքանչյուր տարվա սկզբում այն տոկոսները, վորոնք հավաքվել են նախորդ տարվա ընթացքում, ավելացվում են ավանդատուի կապիտալին և նրանք ել իրենց հերթին տոկոս են բերում նոր տարվա ընթացքում:

Առաջ այնպիսի կանոն էր, վոր ավանդի համար սկսում էյին տոկոս տալ վոչ թե ավանդը մտցնելու ամսից, վորի ընթացքում այդ տեղի եր ունեցել, այլ հաջորդ ամսի 1-ից: Որինսակ, յեթե ավանդը դեկտեմբերի 15-ին եր մտցրվում, ապա տոկոս սկսում էյին հաշվել յուսվարի 1-ից: Ուրեմն մի քանի որերի ընթացքում ավանդատուի փողը նրան վոչ մի ոգուտ չեր բերում: Իսկ հիմա այնպիսի կարգ է հաստատված, վոր տոկոսները որ-որի վրա հաշվեն, սկսած ավանդը մտցնելու հաջորդ օրվանից:

ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ՓՈՂԸ ՊԱՀԵԼԸ ՀԱՐՄԱՐ Ե:

Բացի շահից—տոկոսներից, վորը դրամարկղը վճարում է իր ավանդատուներին, նա տալիս է նաև մի շարք հարմարություններ, առանձնապես գյուղացիներին: Խն. դրամարկղում գյուղացին կարող է պետական փոխառության պարտատոմսեր (облигации госуд. займов) գնել: Իսկ վորովհետև այդ տոմսերը տանը պահելը ընդհանրապես վտանգավոր է,—չե՞ վոր դրանք ել նույնպես դրամ են,—ապա դրամարկղը այդ բանում ել նրան ոգնության է հասնում, նա գյուղացուց ընդունում է այդ պարտատոմսերը—որլիգացիաները՝ ձրխարար պահելու համար, ինքը հետևում է վի-

ճակահանութիւն-խաղարկութիւններին և յեթե վորևէ գումար վիճակ է ընկնում այդ տոմսերին, ապա դրամարկղը հանձնում է տիրոջը նրա ցանկութեան համաձայն, կամ, իբրև ավանդ, նրա հաշվի և գրքույկի մեջ է գրում:

Խն. դրամարկղը, մի կարևոր հարմարութիւններ էլ է տալիս իր ավանդատուներին: Յենթադրենք, վոր մեկը ունի այդ որևէ ցանկաներից և ուզում է վորևէ ապրանք գնել. թեև այդ որևէ ցանկաները փող արժեն, բայց նրանով քեզ ապրանք չեն տալ. և յեթե դրամի սուր կարիք զգացվի, ապա կարելի է այդ պարտատոմսերը գրծով դնել խն. դրամարկղում և ղիմացը փոխառութիւն (պարտք) վերցնել: Իհարկէ, միաժամանակ գրավ դնելուց հետո էլ, ինչպես և առաջ, պարտատոմսերը ավանդատուի սեփականութիւնն են համարում և յեթե գրավ դնելուց հետո նրանց վիճակ է ընկնում վորևէ գումար իբրև շահ (ВЫИГРЫШ), ապա այդ գումարը ավանդատուի ոգտին է անցնում, յեթե, իհարկէ, գրավի ժամանակը չի անց կացրել: Իսկ յերբ ձեռք քիչ ավելորդ դրամ ընկնի, կարող էս ցանկացածը բողբոջին պարտք վերցրած գումարը վերադարձնել դրամարկղին և պարտատոմսերը յետ գնել, յետ ստանալ:

ՅԵԹԵ ՁԵՌՔԻԴ ԱՎԱՆԴԱԳՐՈՒՅԿ ՈՒՆԵՍ, ՄԻԵՎ-ՆՈՒՅՆ Ե ԹԵ ՁԵՌՔԻԴ ՓՈՂ ՈՒՆԵՍ:

Յենթադրենք, թե գյուղացուն հարկավոր է ժամանակավորապես կամ մշտական կերպով մի ուրիշ տեղ տեղափոխվել: Ճամփորդութեան ժամանակ փողը հետը վերցնելը ենքան էլ ապահով բաներից չէ. կա-

րող են կողոպտել, գողանալ, կարող էս վայր գցել ու մի գիտե, թե էլ ինչ փորձանք կարող է պատահել: Այստեղ էլ խնայողական դրամարկղը ոգնութեան է գալիս. նրա միջոցով փողը կարող էս մեր Սովետական Հանրապետութեան մեջ ցանկացածդ անկյունը ուղարկել. դա առանձնապես կարևոր է հանդիսանում քաղաքը աշխատանքի դնացող գյուղացիներին համար: Յեթե պետք է լինում ընտանիքիդ դրամ ուղարկել, ղիմում էս խն. դրամարկղին, հայտնելով թե ինչ գումար և ուր էս ուզում տեղափոխել, դրամարկղը իսկույն յեթեթ այդ կատարում է, ըստ վորում փոխադրութեան համար այնքան էս վճարում, վորքան վոր փոստի ծախսն արժեն:

Նրանց, վորոնց պետք է լինում շրջել զանազան քաղաքներ ու բնակավայրեր, խն. դրամարկղը մի մեծ հարմարութիւն էլ է տալիս. այն դրամարկղից, վորտեղ դու ավանդատու էս գրված, կարող էս վերցնել մի վկայական՝ մի վորոշ գումար ստանալու քո ավանդի հաշվին: Նման վկայականը ակկրեդիտիվ է կոչվում (որը, պարզն ասած, վորոշ լիազորութիւն տվող նամակ է): Այդ վկայականով կարող էս ցանկացածդ տեղը, վորտեղ կանգ կառնես և վորտեղ խնայողական դրամարկղ կլինի (եթե նրա աշխատակիցներին թիվը Ձ-ից պակաս չէ), այնքան փող վերցնել, վորքան քեզ պետք է, — մաս-մաս կամ միանգամից:

ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԵՆԻ ԿԱՐԵՂԻ Ե ԱՄԵՆԱ-ՄԱՆՐ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ—ԿՈՊԵԿՆԵՐՈՎ:

Շատերը այսպես են մտածում. «մեծ գումարներ յետ չունեմ, իմ պայմանների համաձայն յետ չեմ կա-

րող միանգամից դրամարկղը մի քանի ուղբի մտցնել, իսկ չնչին գումարները—ինչ մտցնես դրամարկղը,— միտք չունի»։ Ով այսպես և մտածում, —խորապես սխալվում ե։ Սուածը լավ և առում. «առանց կոպեկի՝ ուղբի չի կարող լինել. խնայած կոպեկը կտվորեցնի ուղբիներ խնայել»։

Մենք հաճախ փոքր գումարները, կոպեկները դատարկ տեղը ծախսում ենք, և չենք գիտակցում, վոր յեթե չվատնեյինք այդ կոպեկները անտեղի և ավելորդ ծախսերի վրա, ապա ժամանակի ընթացքում այդ կոպեկներից ուղբիներ ու տասնյակ ուղբիներ կըկազմվեյին։ Խելացի խնայողությունը, հաշվով տընտեսությունը պահանջում են, վոր մեր ծախսերի ժամանակ ամենավոք գումարներն անգամ խնայենք, վորովհետև ժամանակի ընթացքում այդ փոքր գումարները այնքան կարող են մեծանալ, վոր արդեն պետք կգան տնտեսության մեջ։

Իսկ այն քաղաքացիներին ոգնելու համար, վորոնք հնարավորություն չունեն միանգամից մեծ խնայողություններ անել, առանձին հարմարություն և ստեղծված. խն. դրամարկղներում իբրև խնայողություններ փողի տեղ ընդունվում են նաև փոստի մարկաներ։ Յուրաքանչյուր դրամարկղում կարելի և ստանալ հատուկ բլանկներ, վորոնց վրա կպցնում են գանազան փոստային մարկաններ, ինչ արժեքի ել նրանք լինեն, մինչև վոր հավաքվի մի ուղբու գումար. այդ բլանկը հանձնվում և դրամարկղին իբրև մի ուղբի փող, վորը և գրվում և ավանդատուի հաշվին։ Յեթե վորևե պատճառով դժվար լինի ձարել այդ բլանկը,

մարկաները նույն ձևով կարելի և կպցնել նաև հասարակ թղթի վրա։

Մոտ ապագայում խնայողական դրամարկղներից կարելի կլինի ստանալ (մի փոքր գումար դրավական թողնելով) հատուկ արկղիկներ-դուլաբներ, վորոնց բլանկները դրամարկղում են թողնվում։ Այդ դուլաբում տանը քիչ-քիչ կարելի և փող հավաքել և յերբ քեզ հարմար լինի՝ տանել այն դրամարկղը, վորտեղից ստացել ես դուլաբը, բացել և հանել փողը ու գրել տալ քո ավանդի հաշվին։

Արտասահմանում շատ բանվորներ և գյուղացիներ անհամեմատ ավելի լավ են ապրում մեր բանվորներից ու գյուղացիներից, բայց և այնպես մարկաներով և դուլաբներով մանր խնայողություններ հավաքելը շատ տարածված և նրանց մեջ։

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻ ՄԻՋՈՅՈՎ ԿԱՐԵԼԻ Ե
ՍՏԱՆԱԼ ՀԱՐԿ ԵՂԱԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԵՎ ԲՍՑԱ-
ՏՐՈՒԹՅՈՒՆԸ։

Վերջին ժամանակներս Պետական Աշխատավորական Խնայողական Դրամարկղների Դիւստրի Վարչությունը ցանկանալով ոգնած լինել ազգաբնակչությանը և, առանձնապես, գյուղացիությանը վոչ միայն նրանից ավանդներ ընդունելով, այլև կյանքի մեջ պատահած զանազան հարցերին բավարարելով, կազմակերպել և իր մոտ, յեթե կարելի և այսպես ասել, տեղեկատու բաժին, կամ այլ կերպ ասած Խորհրդատու Տեղեկատու Բյուրո, վորը պարտական է՝ ավանդատուներին հարկ եղած դեպքում բացատրություններ տալ բոլոր կարևոր հարցերի նկատմամբ։

Քաղաքում հեշտ և ցանկացած դ խորհուրդը, ցանկացած տեղեկութիւնը ստանալ, իսկ գյուղում, վորտեղ բոլոր որենքները իմացող մարդիկ քիչ կան,— դա համարյա անհնարին բաներից է, և գյուղացին հաճախ շվարած և մնում և չէ իմանում ինչպես վարվել այս կամ այն դեպքում, յերբ վոր դժվարին խնդիր է ծագում:

Իսկ վերը հիշած խն. դրամարկդների Գլխավոր Վարչութիւնը կից Խորհրդատու Բյուրոյում նստած են բոլոր որենքները շատ լավ իմացող մարդիկ: Ավանդատու-գյուղացին կարող է դիմել կամ ինքը անմիջապես այդ Բյուրոյին (վորի հասցեն հետևյալն է՝ Москва, 6, Настасьинский пер. № 3, Главное Управление Сберегательными Кассами, Консультационно-Справочное Бюро), կամ այն խն. դրամարկդի միջոցով, վորի ավանդատու է ինքը գրված, ըստ վորում նա իր հարցը դրամարկդին կարող է ուղղել բերանացի կամ գրավոր կերպով, իսկ դրամարկդի աշխատակիցը հարցումը կուղարկի ուր վոր հարկն է, իսկ ավանդատու-գյուղացին կստանա իր դրամարկդի միջոցով իրեն հետաքրքրող հարցի պատասխանը առանց ուշացումների: Հարցումով դիմելու ավանդատուները պետք է ցույց տան իրենց ավանդագրքույկի կամ այլ ավանդաթղթի համարը: Խորհրդատու-Տեղեկատու Բյուրոն այդ բոլոր խորհուրդներն ու տեղեկութիւնները տալիս է միանգամայն ճիշտաբար:

ԱՎԱՆԴԱՏՈՒԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԴՐԱՄԱՐԿՂԸ ՀՈԳՍ Ե ՏԱՆՈՒՄ ԱՎԱՆԴԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ:

Յուրաքանչյուր ավանդատու իրավունք ունի իր ավանդը իր ուզած կերպով կտակելու դրամարկդի

միջոցով: Դրա համար ավանդատուն ավանդաթղթի վրա իր մակագրութեամբ պետք է ցույց տա այն մարդկանց, վորոնց պետք է տրվի իր ավանդը իրեն մահից հետո. յետե ավանդատուն անզրագետ է, ապա նրա ստորագրութիւնը պետք է վավերացվի այդ լիազորութիւնը ունեցող վարչական անձնավորութիւն կողմից: Մինչև իր մահը ավանդատուն կարող է իր ավանդի հետ վարվել իր հայեցողութեամբ. իսկ նրա մահից հետո ավանդը տրվում է այն անձնավորութիւնը,— մեկին կամ մի քանիսին,— որին կտակված է ավանդը: Բայց ավանդատուն մոռանալու չէ, վոր իր ավանդը կարող է կտակել այն անձնավորութիւններին, վորոնց որենքով թույլ է տրվում նրա ժառանգը համարվելու. ուղիղ գծով չի շնորհ իրեն շառավիղներին՝ վորդուն, թոռան, թոռան վորդուն և այլն, իրեն մահից հետո կենդանի մնացած ամուսնուն և այն անձնավորութիւններին, վորոնք փաստորեն նրա խնամքի տակ են գտնվել— նրա միջոցներով են ապրել վոչ պակաս, քան մի տարի:

ՈՐՏԵՂ ԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐ:

Բանվոր-Գյուղացիական պետութիւնը վորպեսզի գյուղացուն հնարավորութիւն տա խնայողական դրամարկդից ոգտվելու, հիմնում է նրանից ամեն տեղ, ուր լինում է գյուղացին: Պետութիւնը վորոշել է դրամարկդ բանալ բոլոր շատ թե քիչ մեծ ավանդներում, վորպեսզի գյուղացին հարկադրված չլինի հեռու գնալու, զուր ժամանակ կորցնելու, մի խոսքով այնպես անել, վոր դրամարկդը, ինչպես ասում են, լինի թիղ տակ:

Հիմա արդեն մեր Միութեան դրամարկղները թիվը մոտ 15 հազարի է հասնում:

Հարկավոր է ի նկատի ունենալ, վոր հին նախապատերազմյան դրամարկղները գոյութիւն ունեցին ամբողջ յերեք քառորդ դար, բայց և այնպես այդ դրամարկղների թիվը 1915 թ. տասն և յերկու հազարից չէր անցնում: Իսկ մեր դրամարկղների թիվը միայն 4 տարվա գործունեութեան ընթացքում 15 հազարի է հասնում:

**ՈԳՏՎՈՒՄ ՅԵՆ, ԱՐԴԵՈՔ, ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ ԴՐԱՄ-
ԱՐԿՂՆԵՐԻ ՏՎԱԾ ՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԾ:**

Վերը ասածից արդեն պարզ կլինի ամենքի համար, թե գյուղացիութեանը ինչ մեծ ոգուտներ են տալիս պետական խնայողական դրամարկղները, ինչ մեծ ծառայութիւններ են մատուցանում նրանք նրան:

Յեթե այդ այդպես է, ապա պետք էր սպասել, վոր գյուղացիները պետք է կազմեցին խն. դրամարկղների ավանդառուների ընդհանուր թվի խոշորագույն մասը: Բայց իրականութեան մեջ դրութիւնը բոլորովին այլ կերպ է: Ավանդատուների ընդհանուր թվի՝ 1.663.311-ի միայն 3—5% են կազմում գյուղացիները (առ 1-ն մարտի 1927 թ.):

Ինչ՞ով է այդ բացատրվում:

Ամենից առաջ նրանով, վոր գյուղացիների հըսկայական մեծամասնութիւնը չի ել իմանում, թե խնայողական դրամարկղ ասածդ ինչ բան է և թե ինչ անպակի ոգնութիւն կարող են նրանք նրան տալ: Հետո, շատերը ապրում են ճիշտ այնպես, ինչպես

հնուցն ելին ապրում և գերադասում են փողը տանը պահել, քունջ ու պուճախներում, մտածելով. «Իմ պապերը վոր այդպես յեն արել, յես ել պետք է այդպես ապրեմ»:

Բայց միաժամանակ հիշելու է, վոր մի քանի գյուղացիներ, թեև ծանոթ են խնայողական դրամարկղներին և գուցե կուզեցին ել իրենց խնայողութիւնները այնտեղ պահել, բայց խուսափում են նրանցից, վորովհետև նրանց մտքում զանազան կասկածներ են ծագում դրամարկղների նկատմամբ և նրանք վորոշ յերկյուղ են զգում նրանցից:

Միքանիսը, որինակ, խուսափում են դրամարկղներից, հիշելով հին—նախապատերազմյան դրամարկղների ավանդների վիճակը: Շատերը մտածում են այսպես. «Մինչև հեղափոխութիւնը խնայողական դրամարկղում մի վորոշ գումար ունեցի. ճիշտ է նըրանք առաջվա ժամանակներն ելին մտցրված, բայց և այնպես նրանք այնտեղ կորան. յեթե հիմա փող մտցնեմ, նա ել նույնպես կարող է կորչել»: Բայց այդպես կարող են խոսել միայն այն մարդիկ, վորոնք կամ լավ չեն պատկերացնում կամ իսկի չեն ել հասկանում բոլոր անցուղարձի ելութիւնը կամ այն բոլորը, ինչ վոր տեղի ունի այժմ:

Այդ գյուղացիները այսպես են դատում. «Յես իմ աշխատանքով վաստակած դրամները ցարի ժամանակ մտցրի խն. դրամարկղը և այլևս հետ չստացա, բայց չե՞ վոր Սովետական Իշնանութիւնը խն. դրամարկղները ընդունեց նրանց բոլոր կապիտալներով»: Բայց բանը հենց նրանումն է, վոր դա ամբողջովին

չէ համապատասխանում իրականութեանը. ինչ վերաբերվում է դրամարկղներին, ճիշտ է, վոր Սորհրդային Իշխանութիւնը ընդունել է, իսկ այն դրամները, վոր ժամանակին մտցրված են յեղել,—Սորհրդային Իշխանութիւնը չէ ստացել: Այն դրամները, վորոնք մտցրված էյին խնայողական դրամարկղները և մանավանդ ավելի ուշ մտցրվածները վերածվեցին պատերազմական փոխառութիւնների և պատերազմի պետքերի համար ծախսվեցին: Իսկ չէ՞ վոր պատերազմը իր հետեանքներով Սորհրդային Իշխանութեանը վոչինչ չըբերեց, բացի անտեսութեան քայքայումից: Յե՛վ չնայելով դրան, այն ժամանակ, յերբ դործում էյին հին դրամարկղները, Սովետական Իշխանութիւնը նկատելով, վոր փողի գինը սկսեց ուժեղ կերպով ընկնել, հայտարարեց բոլոր ավանդատուներին, վոր նրանք ներկայանան և ստանան իրենց ավանդները: Յե՛վ Բանվորա-Գյուղացիական կառավարութեան հանցանքը չէ, վոր շատերը իր ժամանակին հետ չ'վերցրին իրենց խնայողութիւնները և դրամները ընկան այնքան, վոր վոչ միայն ուրբիները, այլև հազարավոր ուրբիները հավասարվեցին մի կոպեկի ամենամանջան մասին, այնքան,—վոր նույնիսկ հաշվելը դժվար էր: Ուստի, չի կարելի հիմա դուրս գալ և մեղադրել, թէ իբր Սորհրդային Իշխանութեան ժամանակ խնայողութիւնները կորան:

ԱՎԱՆԴՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ ՊԱՀԵԼԸ:

Կա և մի կարևոր խնդիր, վոր խրատեցնում է գյուղացիներին.—այդ ավանդի գաղտնի պահելն է: Այդ հարցը իսկապես ուշադրութեան տրժմանի է: Գյու-

ղացին այսպես է դատում. հանկարծ մեկն ու մեկը կիմանա իր ավանդի մասին և նրան կնշանակեն իբրև վաշխառույի, կուլակի, իսկ դա չի կարելի ասել թէ դուրեկան բաներից է: Ահա այդ ժամանակ է, վոր միտք է ծագում, թէ, արդե՞տք, լավ չի՞ լինիլ, յեթե փողը պահվի իրեն մոտ, տանը, մի գողտուկ անկյունում, վորտեղ վոչ մի ոտարի աչք չի ընկնիլ:

Մյուս կողմից գյուղացին այսպես էլ է մտածում. ահա Ֆինանսական տեսուչը (Фин. инспектор), նա պետական ծառայող է, խնայողական դրամարկղի ծառայողն էլ պետական ծառայող է: Թե մեկը և թե մյուսը պետական շահերն յեն պաշտպանում: Ֆին. տեսուչը պետական շահերի տեսակետից աշխատում է իմանալ, թէ ի՞նչպես անել վոր ավելի շատ հարկ նշանակվի: Վճնց կլինի, վոր նրան խն. դրամարկղի ծառայողը չ'ոգնի, չէ՞ վոր նա էլ պետական ծառայող է: Նա պետք է, վոր նրան ոգնի:

Գյուղացու նման դատողութիւնը կարծես իրավացի լինի: Բայց նա սխալվում է, և սխալվում է այն պատճառով, վոր սովետական որենքներին լավ չէ ծանոթ: Իսկ մենք ունենք Գրեական Որենսգրքի 117 հոդվածը, վորը ավանդի գաղտնիքը բաց անող ծառայողին պատժում է բանտարգելութեամբ մի տարուց ոչ պակաս ժամանակով:

Որենքով բոլոր ավանդների հաշիվները ամենախիստ կերպով գաղտնի են պահվում կողմնակի մարդկանցից և ավանդների մասին տեղեկութիւններ տրվում են միայն ավանդատուներին և նրանց որինավոր ներկայացուցիչներին: Ըիշտ է, տեղեկութիւններ պետք է տալ և դատական-քննչական իշխանու-

թյուններին, բայց միայն, իհարկե, այն ավանդատու-
 ների մասին, վորոնք քրեական զործի մեջ են մեղա-
 դրում: Բայց, դեհ, մենք խոսում ենք վոչ թե քրեա-
 կան հանցագործների, ոճրագործների մասին, այլ ազ-
 նիվ աշխատավոր-քաղաքացիների մասին: Յեվ անա
 ավանդատուի կամ նրա մտցրած ավանդի մասին կող-
 մնակի մարդկանց տեղեկություն սովող ծառայողը
 քրեական պատասխանատվության և յենթարկվում
 վերը հիշած կարգով: Յեվ խնայողական դրամարկղի
 յուրաքանչյուր ծառայող, յուրաքանչյուր աշխատա-
 կից այդ շատ լավ գիտե, վորովհետև նա ստորագրու-
 թյուն և տալիս այն մասին, վոր իրեն ծանոթ և
 որենքի խստությունը՝ ավանդների գաղտնիքը բանա-
 լու նկատմամբ:

Բոլոր գյուղացիները պետք է, վոր այս բանը
 հստականան և հիշեն, թե ինչու խորհրդային Իշխանու-
 թյունը հոգ է տանում ավանդների գաղտնիքը պահե-
 լու նկատմամբ. միանգամայն պարզ է, վոր յեթե ա-
 վանդները գաղտնի չպահվեն, — այդ թագցնել չի կա-
 ռելի, բոլորը այդ մասին տեղեկություն կ'ունենան և
 դրամարկղը փող չեն տանիլ, այլ կպահեն, ինչպես
 հնումը, ելի պուլիկ ու բղուղներում:

Իսկ վոր դրանից պետությունը վոչ մի ոգուտ
 չի ստանալ, իսկ մյուս կողմից կֆնասվեն և ժողովր-
 դական տնտեսությունը և ինքը՝ գյուղացին, — պետք
 է վոր պարզ լինի յուրաքանչյուրի համար:



**Ձեռների Եղևո Ազատ Դրամներ
 ՊԱՀ ՏԿԵԲ ՊԵՏԱԿԱՆ
 ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ
 ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐՈՒՄ**

Նրանք գտնվում են—ֆին. որդաններին կից,
 բանկերում, պոստ-հեռագրական հիմնարկներում,
 յերկաթուղու կայարանների վրա, գործարաննե-
 րին ու զավոդներին կից, նավահանգիստներում
 և այլն:

ՊԵՏ. ԽՆ. ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԸ՝

Ավանդներ են ընդունում մանր գու-
 մարներով և պոստալին մարկաներով:
 Ավանդատուին յեկամուտ են բերում՝
 8-ից մինչև 9 կոպ. մի տարվա մեջ
 (8—9%) մի ուրբուր դիմաց:

Պետական փոխառությունների պար-
 տատոմսեր են ծախում, ընդունում են
 ձրիաբար պահելու և դրամական փո-
 խառություն են տալիս, գրավ վերց-
 նելով այդ պարտատոմսերը:

Ոչ մի տեղեկություն չեն տալիս պահ
 սված ավանդների մասին և նրանց
 սերերի ազգանունների մասին:

Ավանդները յետ են տրվում անար-
 գելք, հենց առաջին պահանջին:

**Ս.Վ.Ս.Ե.Դ.ՆԵՐԻ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
 ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆՍԿԱՆ ԿՍՈՍՎՍԻՈՒ-
 ԹՏՈՒՆՆ Ե ՊՍՑԱՍԽՍՆՈՒՄ**

**ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ, ՀՈՒ-
 ՍԱԼԻ ՅԵՎ ՇԱՀԱՎԵՏ ԿԵՐՊՈՎ ՊԱՀԵԼՈՒ ՏԵՂԸ
 ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐՆ ԵՆ:**

«Ազգային գրադարան»



NL0209135